

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Բահման Բահադորի «Ահվազ քաղաքի տարածքի զարգացման և նրա էկոլոգիական վիճակի վրա ռելիեֆի ազդեցության գնահատումը աերո և տիեզերական նկարների վերածնման միջոցով» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԻԴ 03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

1. Աշխատանքի արդիականությունը:

Ամբողջ աշխարհում, ինչպես և Իրանում, քաղաքների աննախադեպ աճն առաջացնում է էկոլոգիական մի շարք խնդիրներ, որոնք բացասաբար են անդրադառնում սոցիալական պայմանների վրա, վատթարանում են քաղաքաբնակների ապրելու պայմանները, խաթարվում է առողջությունը, ավելի շատ կապիտալ ներդրումներ են պահանջվում կայուն քաղաքային միջավայր, կայուն մարդկային զարգացման համար պայմաններ ստեղծելու համար: Հետևաբար, ուրբանիզացման միջավայրի էկոլոգիական պայմանների փոխկապակցվածության ուսումնասիրությունը և փոխազդեցության գիտական մեխանիզմի բացահայտումը արդիական է և ունի գիտամեթոդական նշանակություն:

Ահվազ քաղաքը ուրբանիզացման և էկոլոգիական միջավայրի վատթարացման փոխկապակցվածության դասական օրինակ կարող է ծառայել:

2. Ատենախոսության բովանդակությունը և ձևավորման գնահատականը:

Ներածության մեջ հիմնավորվում է աշխատանքի արդիականությունը: Որպես ելակետային նյութեր օգտագործվել են աերոտիեզերական լուսանկարների տվյալները: Տրվել է հետազոտության արդյունք հանդիսացող գիտական նորույթի էությունը, հիմնավորվել է գիտագործնական նշանակությունը:

Առաջին գլխում առանձին բաժիններով տրվել է Ահվազ քաղաքի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը: Այստեղ առանձնակի մեծ ուշադրություն է դարձվել քաղաքի աշխարհագրական դիրքին: Օգտվելով ArcGIS ծրագրային փաթեթից՝ կազմվել են աշխարհագրական դիրքի, տեղագրական պայմանների, բարձրությունների և մակերևույթի

թեքությունների, երկրաբանական ֆորմացիաների քարտեզներ: Այնուհետև ArcGIS 10 ծրագրերի կիրառման միջոցով տրվել է քաղաքի գեոմորֆոլոգիական կառուցվածքի ամբողջական պատկերը և նրանց ազդեցությունը հատկապես քաղաքի միջով հոսող Քարուն գետի ռեժիմի վրա:

Ըստ հետազոտության արդյունքների՝ Ահվազ քաղաքի տարածքի հիմքը ձևավորվել և զարգացել է երկրաբանական կառուցվածքային երեք փուլերով՝ պլատֆորմային, գեոսինկլինալային, լեռնագոյացման: Ըստ հեղինակի՝ Խուզիստան նահանգի երկրաբանական ֆորմացիաները՝ որպես ծալքավոր սողանքային Ջազրոսի լեռների մի մասը, ձևավորվել են նստվածքակուտակման և տեկտոնական տարբեր պայմաններում, այդ պատճառով ըստ ժամանակի և տարածության՝ ունեն զգալի արտաքին տարբերություններ:

Ահվազի երկրաբանական ֆորմացիաներն են՝ Միշանի, Բախտիարի և Աղաջարի: Էկոլոգիական ընդհանուր վիճակի վրա մեծ ազդեցություն են թողնում տեկտոնական բեկվածքները և սեյսմիկ գոտիները: Մարունի, Միչդաղի բեկվածքներում ավելի են ակտիվանում սողանքները, հաճախակի են երկրաշարժերը, որոնք ավելի են վատթարացնում էկոլոգիական ընդհանուր վիճակը:

Ահվազի էկոլոգիական վիճակի վրա մեծ ազդեցություն են թողնում տեկտոնական բեկվածքները և սեյսմիկ գոտիները: Մարունի, Միչդաղի բեկվածքներում ավելի են ակտիվանում սողանքները, հաճախակի են երկրաշարժերը, որոնք ավելի են վատթարացնում էկոլոգիական ընդհանուր վիճակը:

Ահվազի կլիմայական պայմանները նույնպես մեծ ազդեցություն են թողնում քաղաքի էկոլոգիական իրավիճակի վրա: Արաբական անապատներից փչող ավազախառն տաք քամիների հետևանքով քաղաքի օդը խիստ աղտոտվում է, որը մեծ վնաս է տալիս մարդկանց առողջությանը: Հաճախ քաղաքային օդը դառնում է անտեսանելի, փակվում են դպրոցները, ծանր պայմաններում են հայտնվում բուժհիմնարկները, օդային տրանսպորտը չի աշխատում:

Ահվազի էկոլոգիական վիճակի վրա մեծ ազդեցություն են թողնում մակերևութային և ստորգետնյա ջրերը: Այստեղ մշտական են Քարուն գետի վարարումները, որոնք հաճախ կործանարար ազդեցություն են թողնում, պատճառելով նյութական մեծ վնասներ,

մարդկային զոհեր, և միանգամայն ճիշտ է հեղինակը, գտնելով, որ Քարուն գետի ռեժիմի գիտական հետազոտությունը ունի կարևոր նշանակություն:

Երկրորդ գլխում ավելի մանրամասնորեն տրվում է Ահվազի աերոհիդրոգրաֆիկ-երկրաբանական քարտեզների վերլուծությունը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ծալքավորությունների, խզումների հետևանքով առաջացող վնասներին և վտանգներին: Խուզիստանի նահանգի և Ահվազի համար առանձնակի վտանգ են ներկայացնում հողմնահարության հետևանքով առաջացած ավազե բլուրները, հատկապես, երբ նրանք շարժվում են իրենց տակ առնելով մշակովի հողերը՝ ոչնչացնելով բուսածածկը: Ըստ հեղինակի՝ խնդրի լուծման համար շարժվող ավազաթմբերի հանդիման պետք է ստեղծել արգելապատնեշներ: Խնդրի լուծման միջոցներից է նաև շարժվող ավազների բուսածածկումը, որ միանգամայն հնարավոր է, քանի որ ավազաբլուրների տակ ոչ մեծ խորություններում կան ջրի մեծ պաշարներ:

Երրորդ գլխում վերլուծվում են Ահվազի տարբեր շրջանների հողօգտագործման ձևերը, մեկ շնչի հաշվով գործառույթները, նրանց համեմատությունը 1989 թ. ընդունված քաղաքի զարգացման ծրագրի հետ:

Հետազոտության արդյունքում առանձնացվել են գործառույթների հինգ խոշոր խմբեր.

- բնակելի շրջաններ և համալիրներ,
- սպասարկման ոլորտի շրջաններ (կենցաղային, ժամանցի և հանգստի),
- ճանապարհային ենթակառուցվածքներ,
- գյուղատնտեսական, ռազմական շրջաններ,
- անմշակ, ամայի, չյուրացված տարածքներ:

Ընդ որում, տարածքի ¼-ը դեռևս կառուցապատված չէ. հենց այստեղ է անհրաժեշտ հաշվի առնել արդեն իրագործված կառուցապատման փորձը և ատենախոսության մեջ ստացած արդյունքները: Այդ առումով գործնական նշանակություն կարող են ունենալ հեղինակի կողմից ստացված համ. 21, 24, 27, 31, 32, 33, 36, 38, 44, 45 քարտեզները:

Չորրորդ գլխում Ահվազ քաղաքի զարգացման դինամիկայի վերլուծությունն է՝ ուսումնասիրվող օբյեկտը դիտարկելով ժամանակի կտրվածքի մեջ: Խնդիրը լուծվել է տարբեր ժամանակահատվածներում քաղաքի ընդհանուր պատկերի համեմատությամբ՝

տեղագրական և արբանյակային քարտեզների կիրառման միջոցով: Առանձնակի արժեքավոր են ամերիկյան Lansat արբանյակների տվյալների վերլուծությունը, որը կատարվել է Geomatica 9,1, Arc GIS 10, Excal 2007, Googl Earth ծրագրերի կիրառման միջոցով: Խնդիրը լուծվել է 1971, 1991, 2001 թ. կատարված համ. 47, 48, 49 քարտեզների համեմատության միջոցով: Այդ տարիներին փոխվել է քաղաքի բնակեցման ներքին կառուցվածքը, կառուցվել են նոր ձեռնարկություններ ծայրամասերում, առաջացել են նոր էկոլոգիապես աղտոտված շրջաններ, կրճատվել են կանաչ տարածքները, մշակովի հողերը:

Հինգերորդ գլխում կատարվել է Ահվազի էկոլոգիական վիճակի համալիրային վերլուծություն: Լանդսաթ արբանյակային լուսանկարների վերլուծության միջոցով ստացվել է քաղաքի բուսածածկույթի վեգետացիոն գործակիցը: Այնուհետև, ըստ արդյունքների, առանձնացվել են երեք խմբի տարածքներ.

ա/ բուսազուրկ,

բ/ նոսր բուսածածկով

գ/ խիտ բուսածածկով:

Ստացված արդյունքների վրա ստեղծվել են 56, 57, 58, 59 քարտեզները, որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքի տարածքի 18 %-ն ունի խիտ բուսականություն, 77 %-ը՝ նոսր բուսականություն, 5 %-ը՝ բուսազուրկ (1990 թ.): 2013 թ. այս ցուցանիշները փոխվել են, ըստ որի, բուսազուրկ տարածքների տեսակարար կշիռը 5 %-ից հասել է 77 %-ի: Դրան հակառակ, խիտ բուսածածկույթը նվազել է 18 %-ով, իջնելով 5%-ի: Պատճառը մեծ մասշտաբի կառուցապատումներն են և հաճախակի կրկնվող երաշտները:

3. Ատենախոսությունում ձևակերպված գիտական դրույթների, եզրակացությունների պարզաբանման աստիճանը, դրանց առանձնահատկությունները.

Ատենախոսության գիտական դրույթները և եզրակացությունները հավաստի են: Դրույթներում աերոտիեգրական լուսանկարների միջոցով ուսումնասիրվել, վերլուծվել և գիտականորեն հիմնավորվել են Ահվազ քաղաքի էկոլոգիական իրավիճակի տարածաժամանակային փոփոխություններն ու դրանց ազդեցությունը քաղաքի էկոլոգիական, սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Այստեղ գլխավորը աշխարհագրական հետազոտությունների մեջ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումն է, ինքնուրույն

գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակությունը և արժեքավոր գիտական եզրահանգումներ կատարելու կարողությունը:

Հետազոտության արդյունքներն ունեն գիտագործնական և կիրառական նշանակություն:

Եզրակացություններում հեղինակը առաջարկում է խնդրի լուծմանը մոտենալ համալիրային ձևով, ըստ որի քաղաքի հետագա աճը, սոցիալական և էկոլոգիական իրավիճակների փոփոխությունները դիտարկել մեկ ընդհանրության մեջ և գիտական պլանավորման միջոցով հասնել կայուն քաղաք գաղափարին:

Միանգամայն տեղին է, որ հեղինակը առաջարկում է քաղաքի հետագա ընդարձակումը դնել գիտականորեն հիմնավորված նախագծերի հենքի վրա, ներդնել նոր տեխնոլոգիաներ:

Քաղաքի հետագա կառուցապատումը դնել օրինական հիմքի վրա: Առանձնակի ուշադրություն դարձնել քաղաքի բնակիչների էկոլոգիական մտածեկալերպի զարգացմանը, ընդարձակել քաղաքի կանաչ տարածքները:

4. Ատենախոսության արդյունքների գիտական և կիրառական նշանակությունը ակնհայտ է, նրանք կարող են կիրառվել Ահվազ քաղաքի հեռանկարային զարգացման ծրագրերի մեջ:

Ահվազի զարգացման գիտականորեն հիմնավորված դրույթները կարող են օգտագործվել նաև այլ քաղաքների սոցիալ-տնտեսական զարգացման, էկոլոգիական խնդիրների լուծման ծրագրեր կազմելու համար:

5. Դիտողություններ. Աշխատանքում կան մի քանի անորոշություններ.

ա/ ըստ հեղինակի՝ (էջ 81) երրորդ գլխի բոլոր քարտեզներն ու գրաֆիկները վերցված են «Ահվազ քաղաքի համալիր ծրագրից» (տես գրականություն 6):

Իսկ քարտեզների վրա (նկ. 27, 31 և այլն) նշված է, որ նրանք կազմվել են ԵՊՀ-ում հայցորդի և նրա ղեկավարի կողմից՝ համեմատելով «Քաղաքի զարգացման ծրագրի հետ» (գրականություն 83):

բ/ էջ 96-ում գրված է, որ կենսոլորտի վերաբերյալ հայեցակարգ է տվել Պոլ Թեյլորը «Հարգանք բնության նկատմամբ» գրքում (գրականություն հմ. 16): Գրականության ցանկում 16-ի հեղինակը Բենսոն Ջոնն է:

3/ էջ 98-ում տրվում է Ռ.Ռեչիստերի կարծիքը կայուն զարգացում ունեցող քաղաքի մասին (գրակ. 11): Գրականության ցանկում 11-ի հեղինակը հայցորդն է և ղեկավարը:

4. Աշխատանքում տեղ գտած քարտեզների մեծ մասի գույները խառնված են և անընթեռնելի:

5. Աշխատանքը ավելի կշահեր, եթե եզրակացություններն ու առաջարկություններն ընդհանրացվեին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չնայած վերոհիշյալ դիտողություններին Բ. Բահադուրի «Անվագ քաղաքի տարածքի զարգացման և նրա էկոլոգիական վիճակի վրա ռելիեֆի ազդեցության գնահատումը աերո և տիեզերական նկարների վերձանման միջոցով» թեմայով ատենախոսությունը կարելի է գնահատել որպես գիտական մակարդակով կատարված ավարտուն աշխատություն, որը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի թեկնածուական ատենախոսություններին առաջադրած պահանջներին, իսկ հեղինակ Բահման Բահանդուրը արժանի է ԻԴ 03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս

Աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝

Ա.Ռ.Ավագյան

ԵՊՀ սերվիսի ամբիոնի պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյանի ստորագրությունը

Հաստատում եմ՝

ԵՊՀ գիտ.քարտուղար՝



Լ.Ս.Հովսեփյան